# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 136-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Քրիստինե Սիմոնի Աղիկյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1114298 վկայականը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԼԴ2/0159/02/21 գործով վճիռը, Օձուն համայնքի ղեկավարի 15.03.2013թ. N 27-Ա որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Քրիստինե Սիմոնի Աղիկյանին դատարանի վճռով պատկանող, մարզ Լոռի, Օձուն գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 2-րդ փողոց, 13/1 բնակելի տուն փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 16
ք. Ալավերդի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 137-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 23.11.2022թ N 79-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 15122022-06-0047 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Արեն Լալայանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 61 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 23.11.2022թ N 79-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 45.1 քմ արտաքին մակերեսով (38.9 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 46363 (քառասունվեց հազար երեք հարյուր վաթսուներեք) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00451 հա մակերեսով հողամասը՝ 35719 (երեսունհինգ հազար յոթ հարյուր տասնինը) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Արեն Լալայանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 138-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 30.09.2022թ N 335-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 19122022-06-0027 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Մամիկոն Ավետյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օսիպյան փողոց, 29 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 30.09.2022թ N 335-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 37.8 քմ արտաքին մակերեսով (30.8 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 38858 (երեսունութ հազար ութ հարյուր հիսունութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00378 հա մակերեսով հողամասը՝ 29938 (քսանինը հազար ինը հարյուր երեսունութ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Մամիկոն Ավետյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 139-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 18.11.2022թ N 74-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 15122022-06-0049 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Վարազդատ Գալստյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 13 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 18.11.2022թ N 74-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 32.1 քմ արտաքին մակերեսով (27.5 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 32999 (երեսուներկու հազար ինը հարյուր իննսունինը) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00321 հա մակերեսով հողամասը՝ 25423 (քսանհինգ հազար չորս հարյուր քսաներեք) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Վարազդատ Գալստյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 140-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.11.2022Թ. N 94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 28.11.2022թ. «Ինքնակամ կառուցված հասարակական գործառնական նշանակության բաց պատշգամբով խանութի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու, հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու թույլտվություն տալու մասին» N 94-Ա որոշման 2-րդ կետում «2022XEDMA»-ի փոխարեն կարդալ. «20228XEDMA»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 141-Ա

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 06-088-0108-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՄԱՌԱՆՆԵՐԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ, ՊԱՐԻՍՊԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 05.01.2022թ. N 13-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Անդրանիկ Սերյոժայի Մելիքսեթյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 1327204 վկայականը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Ալավերդի համայնքի ղեկավարի 05.12.02022թ. N 108-Ա որոշումը, 27.03.2004թ.-ին կատարված չափագրման ուրվագիծը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, մասնագիտական եզրակացությունը, Շնող գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված N 1377 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Անդրանիկ Սերյոժայի Մելիքսեթյանին, Սուսաննա Սերյոժայի Մելիքսեթյանին ժառանգության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 6-րդ փողոց, 16 բնակելի տուն հասցեում գտնվող, բնակելի տան, մառանների անասնաշենքերի, պարիսպի հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասում գտնվող, 1967 թվականին կառուցված, կադաստրի կոմիտեում 20226FKWFN ծածկագրով հաշվառված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների

էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ բնակելի տունը, մառանները, անասնաշենքերը, պարիսպը և 1997թ. կատարված ձևափոխությունները Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Անդրանիկ Սերյոժայի Մելիքսեթյանի (ծնված՝ 11.11.1961թ.), Սուսաննա Սերյոժայի Մելիքսեթյանի (ծնված՝ 15.05.1969թ.) համասեփականությունը:

3. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 142-Ա

## ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 1/19-8 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակարանն ու կատարված ձևափոխությունը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Արթուր Սուրենի Գևորգյանի դիմումը, անձնագրի պատճենը, N 15052017-06-0023 սեփականության իրավունքի վկայականը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից 12.12.2022թ. տրված N 121/22Ե եզրակացությունը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Արթուր Սուրենի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 1/19-18 հասցեում գտնվող բնակարանին կից՝ 2017թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 20223CXTLM ծածկագրով հաշվառված, 8.8 քմ արտաքին մակերեսով բաց պատշգամբը ճանաչել օրինական:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի համաձայն նշված բնակարանում կատարված 1 հատ դռան ձևափոխությունը ճանաչել օրինական:

3. Օրինականացված 8.8 քմ արտաքին մակերեսով շինության զբաղեցրած հողամասի նկատմամբ կիրառվում է շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու վերաբերյալ նորմերը:
4. Օրինականացված բաց պատշգամբի և կատարված ձևափոխության համար սահմանված վճարն ընդհանուր՝ 3742 (երեք հազար յոթ հարյուր քառասուներկու) դրամ գումարի չափով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 143-Ա

### ՀՐԱՀԱՏ ՎԱՐԴԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական ղեկավար Հրահատ Վարդանի Սիմոնյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 25.12.2017թ. կնքված N 2 աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Հրահատ Վարդանի Սիմոնյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 144-Ա

## ՎԱՐՈՍ ԿՈՐՅՈՒՆԻ ՎԱՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական ղեկավար Վարոս Կորյունի Վարոսյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 08.07.2021թ. կնքված N 7 աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Վարոս Կորյունի Վարոսյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 145-Ա

## ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՎՐԻԿԻ ԹԱՄԱԶՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Կաճաճկուտ գյուղի վարչական ղեկավար Ռուզաննա Մավրիկի Թամազյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 01.03.2018թ. կնքված N 16 աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Ռուզաննա Մավրիկի Թամազյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 146-Ա

### ՄՀԵՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Ջիլիզա գյուղի վարչական ղեկավար Մհեր Սերյոժայի Վարդանյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 25.12.2017թ. կնքված N 6 աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Մհեր Սերյոժայի Վարդանյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 147-Ա

### ՎԱՀԵ ՀՐԱՉՅԱՅԻ ՊԱՊԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «ժը» կետերով ***որոշում եմ՝***

1. Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Վահե Հրաչյայի Պապինյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 06.02.2018թ. կնքված N 7 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Վահե Հրաչյայի Պապինյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 148-Ա

### ԱՐԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԲԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «զ» և «ժը» կետերով ***որոշում եմ՝***

1. Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գույքի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար Արա Սամվելի Աբելյանին 2022 թվականի դեկտեմբերի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծված համարել նրա հետ 14.02.2018թ. կնքված N 24 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնին՝ հաշվարկել և Արա Սամվելի Աբելյանին վճարել վերջնահաշվարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 149-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ռուբեն Սերյոժայի Մարգարյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Օձուն համայնքի ղեկավարի 15.03.2013թ. N 27-Ա որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ռուբեն Սերյոժայի Մարգարյանին ժառանգության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Օձուն գյուղում գտնվող, 06-112-0036-0005-001-031 ծածկագրով տարածքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 8-րդ փողոց, 9 շենք, 31 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 150-Ա

### ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 6)-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Շնողի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 09.12.2022 թվականի թիվ 2 արձանագրությունը ***որոշում եմ՝***

Անչափահասներ Արմեն Հովհաննեսի Չիչակյանին (ծնված՝ 21.05.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ131034, տրված՝ 25.05.2011թ., ՔԿԱԳ Թումանյանի տ/բ-ի կողմից) և Ալեն Հովհաննեսի Չիչակյանին (ծնված՝ 08.08.2013թ, ծննդյան վկայական՝ ԱԲ273800, տրված՝ 08/08/2013թ., ՔԿԱԳ Թումանյանի տ/բ-ի կողմից)՝ ճանաչել առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 20
ք. Ալավերդի